

ՀԱՅ

ՄՎԱՐՏՆԵՐ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Բ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
SCOUTS ARMÉNIENS


ՀԱՍՅԷ - Խորասանձեան Խան, Թի 26, Սիրէճի և Գոլիս
ADRESSE - Khorassandjian Han, 26, SirKédji Constantinople

Հեռագրայն Ար. 2146 | ԲԱԺՆԵԳԻՆ | Telephone 8t. 2146

Բ. ՏԱՐԻ Թ Ի 18

Պոլիս և Գալատի Տրիբ, 22 120
Արասանձեան . Ժ 15
Ամերիկա . Ժ. 150

16 ԱՊՐԻԼ, 1922



Հ Ա Յ Ն Ն Ո Ւ Մ


Այնպիսի օրերի սրբանցի սկսուածներէն:

Ս Կ Ա Ս Ի Տ Ն ԵՐ,

Բ Ա Ր Ե Կ Ա Ս Մ Ն ԵՐ Ս,

Ը Ն Կ Ե Ր Ն ԵՐ Ս,

Չեր մանկութենէն սկսած գործօն կեանքի ետանդովը նետուած էք միատարութեան մէջ, ուր արեացած էք կատարեալ առողջութեան ու զուարթամտութեան, ուժերու գործածութեան և ազնուագոյն զգացումներու մշակումին: Ատով դուք պիտի աւննաք ճարտար ձեռներ, ուժեղ բազուկներ, գիւրաճապուկ սրունքներ, երկաթեայ կուրծք և սուկեղէն սիրա մը:



Ալեքսանդրօօրի կազաչի փօսրի սկաւտներ (Չեռազի սկաւտներ)

Սկաւտին՝ ոչ թէ ինքնահաւանութիւններով (Snobisme) ու գործիքով, այլ օգտակարութիւնով ու հասոյքով գործադրուած փորձերն ու խաղերը ձեզի պարզեւած են արդարութեան, օրինադրութեան, համերաշխութեան և անհրաժեշտ կարգապահութեան զգացումը: Յետոյ ճանրաներու վրայ հետախուզութիւնը ձեզի համար աշխարհի դժուարութիւններն ու բարդութիւնները թեթեւեցած եղան: Դուք գիտէք ձեր « գլուխը աղասել », ինչպէս ուրիշներուն ալ: Ուժեղներու անտոյթ ու խոստան քաջութիւնովը պատրաստ էք ամէն սոխի մէջ օղնելու, աջակցելու ձեր մերձաւորին:

Եւ անուատիկ ձեր պարտականութեան առաջին շրջանին կը ներկայանայ ձեր առնական

յատկութիւնները կիրարկելու պատահութիւնը — Դուք կոչուած էք նաեւ նուիրական պարտականութիւններէն մէկուն, զինուորական ծառայութեան:

Չինուորական այս կեանքն ալ ձեզի պիտի երեւնայ այնքան հաճելի և գիւրին, որքան կեանքի միւս գործողութիւնները: Չեզի խիտաբնական պիտի թուի ձեր գոյութեան մէկ քանի տարիները նուիւ ելլը հայրենիքին, քանի որ արդէն յօժար էիք կեանքերնից վաանգելու անձկութեան մէջ սուղուած ձեր մէկ բնկերին օգնելու համար:

Այս կեանքը եւս գրաւիչ ու պարզ պիտի երեւայ ձեզի, որ լաւ քալողներ ու լաւ հետախոյզներ էք, որ կը հեզնէք դաշտային արգելքները, որ հաճոյքով կը պառկիք կարծր սեղեր, որ գիւրութեամբ կը շրջիք նեղ արահեաներու մէջ:

Դուք զուարթօրէն յանձն պիտի առնէք այդ կեանքին փոքրիկ զրկումներն ու մտնը տաղաւկները: Եւ հետեւ հեծելէն ու քննադատելէ, զօրանոցին մէջ լաւ և առողջ օրինակը պիտի տաք ուրիշներուն, պիտի օգնէք և քաջալերէք սկաւտադոյնները, ու ձեր փորձառութիւնով պիտի նպաստաւորէք քիչ մը թմրածները: Եթէ ամանց քով զգաք սնտուրի գազափար մը կամ կորովի նստազուժ մը, կոչուժ պիտի բնէք իրենց սղջմտութեան, իրենց ազատ մարդու բարեմտութեան, ամենօրեայ դեպքերով ցուցնելու համար իրենց թէ ժողովուրդներն ալ անհասանելու պէս մերթ կ'ստիպուին ինքնապաշտպանութեան: Անոնք կրնան պահպանել իրենց բարոյական անկախութիւնը, իրենց աւանդութիւնները և այն երկիրը ուր կը ննջեն իրենց նախահայրերը:

Վերջապէս արիւրար կատարուած պարտականութիւնով հոգր, և աւելին՝ աշխատութեան ու պայքարի համար զինուած պիտի վերագառնաք ձեր զբաղումին ու սրհետին: Եւ ա'լ միշտ ձեր անձնական օրինակովը պիտի առաջնորդէք ուրիշները Սկաւտութեան կենսատու աղին՝ ուր մարդած պիտի բլլաք այն ամէն ուժերն ու յատկութիւնները որոնք ցեղ մը աշխատասէր, միակամ ու վեհանձն կը դարձնեն և սրնք, անոր բիւն ու ուժը աւելցնելով կ'ապահովեն աեւականութիւնը, ազատութիւն ու փառքը:

Այսպէսով, սկաւտաներ, կատարելապէս յարգելի պիտի բլլաք ձեր անձին, համաքաղաքացիներուն ու հայրենիքին:

Commandant Royet
Հաւաքար՝ Թագ. Շ. Պ. ՋՐՐԵԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ ՄԸ


ՍԿՈՒՏՆԵՐՈՒՆ

Մեր անձնուիրութիւնը յաճախ կուսնանայ իր վարձատրութիւնը, կ'ազգեմ անձնուիրանէս ընկնակ մը ապա հոս ինչ որ զիս միշտ երջանիկ բրամ է, ամէն անգամ որ անոր վրայ մտածեմ, լէնզ հպատակութիւն սկիզբներն էր, ամէն հայտ վիզէն աքտորի շղթան կախուած էր. շատե՛ր ճամբան ինկած էին ու շատեր ալ աքտորուելու սպառնալիքին ենթարկուած: Ես ալ այս վերջիններէն էի. մանաւանդ գրգարութեամբ մը զո՛ն գացած ըլլալով, կախազան բարձրանալու վաանգին ենթարկուած: Զիտ ամբաստանած էին թէ կարեւոր չէնք մը օգը պիտի հանէի, երբ պէտքը զգացուէր. թէ՛ անդիացիներու կողմէ վարձուած լրտես մըն էի, և յիշ. — զիս զբարտադրները հայեր էին դժբախտարար: Պատերազմէն վերջ երբ այս հայերը իմ քովս վերադարձան, ինձմէ դարձ ուղեցին, քովս առի և կարելին ըրի անոնց հանդէպ լաւ վարձուէք մը ունենալով, սրբազրել անոնց անցեալի աղտոտ գործքը և սխալ խիղճը: Յաջողեցայ և հասկցան իրենց սխալը: Ինչո՞րք ալ այս չէ:

Աքտորի և մահապատիժի այս սպառնալիքներէն ազատելու, որ և է ճար չունէի: Երկար և ան ինձմէ տկար էր, իսկ բարեկամներս արդէն առեւին վախերնէն իրենց համար մէյմէկ ծակ պատրաստած էին: Իմ միակ յոյսս նախախնամութիւնն էր և այդ բարի նախախնամութիւնը՝ ինձ օգնութեան հասու, ինչպէս պիտի հասնէր ամէնուն:

Շարաթ երեկոյ մըն էր. ժամը երեկոյեան 7 ի առեւնները կամուրջէն կղզի մեկնող չոգեանաւ մը վերնայարկը նստած՝ ընտելեան զեղեցիութիւններուն վրայ գրուած ուսումնասիրութիւն մը կը կարգայի. չոգեանաւ աննկարագրելի կերպով քեանաւորուած էր, այնպէս որ՝ որոշեալ ժամանակէն հինգ վայրկեան առաջ մեկնել ստիպուեցաւ: Մինչ անիւները կը դառնային, չոգեանաւին յառաջամտոր բանալու համար, միւս կողմէն ճամբորդներ մէկիկ մէկիկ չոգեանաւ կը ցատկէին: Ասոնցմէ ամենէն վերջինը, թուրք մը, պետական խորհրդոյ գատական նախագահ և կայսերագուն Սէլահէտաին պէյն էր, որ արկածով մը ինկու գարձող անիւներուն մէջ: Ընկեր արձակուեցան, գլուխս բարձրացուցի գիրքէս, տեսայ մահուան գրկին մէջ այդ իշխանը, տարուեցայ յուզմունքէս ու իմ ալ առջեւ տարածուող զերեկմանը չտեսնելով անմիջապէս այդ բարձրութիւնէն նետուեցայ անիւներուն և ալիքներուն դէմ կուռող այդ հէք պէյին մօտ, բրտնեցի անոր ուսերէն, հոսանքէն դուրս քաշեցի: Յամաքէն նետուած չուանով մը ան ծովէն հանուեցաւ: Փրկուած էր. ես գո՛ն էի, հակառակ որ զիս ալ ծովէն դուրս հանելու փորձ

մը բնող չի կար, մարդուն մէկը չուան մը նետեց ինձ ու երբ զայն բունելով վեր ելլել կը փորձէի, մարդուկը ծովը պիտի գլորէր, ստիպուեցայ մաղցելով ելլել: Տեսէ՛ք, այդպիսի հոգեբանական սպառնալիքով անձնագործութիւնը պէտք եղածին չափ չգնահատուիր



Եզմիրի Ս կառուներէն

առկայն պէտք չէր յուսահատուիլ, այն ատենուան զգացած հոգեկան հաճոյքս կեանքէս առելի կ'արժէր ինձ ու այդ օրը ապրած օրերէս ամենաերջանիկ օրը եղաւ ինձի համար:

Իմ ախմայ, բնագրական անձնուիրութեանս գործնական վարձատրութիւնը ստացայ յաջորդ օրն իսկ: Աքտորի և մահապատիժի սպառնալիքը միանգամ ընդմիշտ վերցած էր ինձ համար և պաշտօնիս նախաձէն մօտերս սլքտացող օձերը իրենց պատեանը սաներուս տակ թողելով, գացին հեռացան ուրիշ մտի անկիւններու մէջ գործելու համար: Որքան ուրախ էի, երբ այն ատենուան անուանական զօրարածին հրամանատարը կառավարութեան կողմէ նշան առնելուս լուրը լսելով զիս իր մօտ կը նստեցնէր Քփափաղեան գարտաչքմ, թէպէրք խէրիմ, պիտի սիկարս պուլուրունք բերով:

Այսպէս հայ սպառնալիքներ, ամէն բարի գործ ունի իր վարձատրութիւնը: Յաճախ երբ ձեր աջակցութեամբ նոյնիսկ խեղճի մը արտատուքը կը սրբէք, համոզուած եղէք որ ձեր մէկ պակասը կը լրացնէք, ձեր կեանքի երջանկութեան նեցուկներէն մին կը հաստատէք և օրին մէկն ալ յաղթանակով կը զիմադրէք կեանքի փոխորդներուն:

Վ. Ս. ՓԱՓԱՅԵԱՆ

Ե. Խ. Նախորդ թիւին, էջ 258 ի գրութիւնն ալ «68 տարեկան սխալու մը» Գ. Վ. Ս. Փափաղեանինն է, սխալմամբ «չարունակիլի» գրած է:

ՄԱՐԱԿՆԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Պէտրն Բաուրը իր «Scouting for Boys» գիրքին 1908 թվ. սպազբութեան մէջ, խմբակներու գրութիւնը կը յանձնարարէր և անոր միջոցաւ միայն կարելի կը նկատէր սկաուտներու նկարագրի կազմութիւնը ձեռք բերել, նոյն գիրքին Ե. սպազբութեամբ, ան փորձով աւելի համոզուած՝ ձեռք բերուած արդիւնքէն կը յանձնարարէր սկաուտներու ձեռներեցութեան ուղիին մշակութեան համար զարկ տալ և խմբակներու գրութեան աւելի լայն ազատութիւն տալով ամէն սկաուտի:

«Խմբակներու գրութիւն» գիրքին հիշուակը պատերազմի զաշարն վրայ ինկած նախկին սկաուտ խմբապետ E. Philipps անուն անգլիացի մըն է, նոյն գիրքին մէջ Պէտրն Բաուրը յառաջարկեցով մը մեզ կը յանձնարարէ ուշագրութեամբ կարգալ զայն և կ'աւելցնէ «խմբակներու գրութիւնը քանի մը սկաուտներ միացնելով՝ զանոնք իրենցմէ մէկուն հրամանին ենթարկելուն մէջ կը կայանայ: Մեծագոյն արդիւնք մը ձեռք բերելու համար պէտք է իր պատասխանատուութեամբ գործելու ազատութիւն տալ խմբակին առաջնորդին: Երբ անոնց մասնակի ազատութիւն մը տրուի, միայն մասնակի արդիւնք մը պէտք է սկսնկալել: Խմբակին առաջնորդներուն գործելու այսպէս ազատութիւն տալով խմբապետին գործը մեծ մասով կը թեթեւնայ, ան այսպէսով կրնայ սկաուտութեան գիտութեանց մէջ աւելի զարգանալու ժամանակ ունենալ: «Խմբակներու գրութիւն»ին բուն նպատակը այս չէ, այլ փոքր հասակէն ազոց պատասխանատուութեան զգացումը զարգացնել և զանոնք ձեռներեցութեան ուղիով օժտելն է: Խմբապետը օրուան պարտականութիւնը կը բացատրէ խմբակի առաջնորդներուն, անոնց ուղղութիւն մը կուտայ գործելու, առաջնորդները զատ զատ իրենց խմբակները իրենց ձեռքով մարզելով՝ միեւնոյն արդիւնքին կը հասնին առաւել կամ նուազ: Ահա՛ այս ձեւով իսկ ձեռք կը բերուի անզգալարար ներդաշնակութիւն մը խումբին մէջ, անոր բոլոր անդամներուն աշխատութեան գործին մէջ:»

Պէտրն Բաուրը այս սողերէն վերջ երբ կ'սկսիմ ընդարձակ կերպով ակնարկ մը նետել ընդհանուր առմամբ այս խիստ կարեւոր գրութեան վրայ, սկսածայ կ'զգամ թէ՛ այլեւս ան-

հրաժեշտ դարձած է այսպիսի խիստ կարեւոր գործերուն հայերէն թարգմանութիւնը: Մաղթենք որ մեր խումբերն ալ օժտուին մօտիկ սպազայի մէջ սկաուտական փոքրիկ սպարանով մը ուր՝ կարենան հրատարակել զանազան գործեր:

Ինչպէս ծանօթ է ամէնուս խմբակներու գրութիւնը 6, 7, 8 սկաուտներ միացնելով՝ անոնց սահմանի մը տակ գործելու ազատութիւն տալուն մէջ կը կայանայ, այս արուած ազատութեամբ միայն կարելի է պատասխանատուութեան ենթարկել խմբակին առաջնորդը և օժտել զինքը ձեռներեցութեան ուղիով: Սկաուտական կեանքի մէջ խմբակը պէտք է իբր միութիւն ընդունիլ: Միութիւն մը խաղի ժամանակ, միութիւն մը վրանի կեանքի առին, միութիւն՝ ճաշի պատրաստութեան պահուն, միութիւն մը մարզանքի պահուն: Այս միութիւնը միշտ պէտք է անկախ մնայ ամէն բանէ, միշտ պատասխանատու խմբապետին և միշտ անոր հսկողութեան տակ գործելու է: Փոքրիկ սկաուտները այս միջոցով խոհուն, հետադարձ վերջապէս ճշմարիտ սկաուտներ կարելի է պատրաստել: Անոնց ձգելով — զանազան դասերէ և մարզանքներէ վերջ — կանգնել իրենց վրանը, պատրաստել ճիւղերով իրենց անկողիքը, ծառի ոտեր հաւաքել կրակ վառելու համար, ճաշ պատրաստել և պահակ սպասել: Եթէ խմբակը միութիւն ըլլալէ զապրելով խումբը միայն միութիւն մը կազմէ խմբապետին հրամանին տակ, նախ խմբապետը կ'իյնայ խիստ դժուարին կացութեան մը մէջ և միւս կողմէ՝ խմբակի առաջնորդներուն գերը չհղօքացուելով այլեւս անկարելի կը դառնայ անոնցմէ գործ ակնկալել: Երբ ընդունինք ըսկզբնամբ թէ պէտք է խմբակը իբր միութիւն ընդունելով տալ անոր գործելու լայն ազատութիւն, անուշտ անկախ կարող առաջնորդի մը կողմէ կառավարելու պէտքը անհրաժեշտ կը դառնայ:

Աւերին ո՞վ առաջնորդ պէտք է ընտրուի: Ամենէն կարողը անուշտ բայց հասկարող բառը ճարպիկ, գիտուն, ձեռնահաս չի նշանակեր այլ կարող իր ընկերներուն վրայ ազդելու եւ անոնց առաջնորդելու: Միւս կողմէ ընտրութեան մէջ պէտք է նկատի առնուի տարիքը, որովհետեւ մտքի զարգացումէն առաջ փոքրերուն վրայ մկանի զարգացումը կ'ազդէ, միշտ պէտք է նախապատուութիւն տալ խմբակին ամէնէն տարեցին: Ասիկա չի նշանակեր

թէ 12 տարեկան սկսուած մը խմբակի առաջնորդի պաշտօնը չի կրնար կատարել, ինչո՛ւ չէ շատ անգամ կրնայ 16, 18 տարեկան սկսուաին պէս գործել, ընդհանուր առմամբ շատ քիչ բացառութեամբ, իրմէ տւելի փոքր սկսուաին չի հպատակիր տարեց սկսուած մը և եթէ նոյն իսկ երբ սկսուածը հպատակի՝ փափաքով չի մասնակցիր խմբակին աշխատութեանց: Խմբակին առաջնորդը սրբան ալ խելացի, սրբան ալ ձեռներեց ըլլայ իր փոքրիկ հասակով անշուշտ չի կրնար հասնիլ խմբակին բոլոր գործերը վարելու, իրեն օգնելու և իր բացակայութեան խմբակին գործերը վարելու համար՝ իր փոխանորդը կ'ընարէ: Խմբակին յառաջդիմութիւնը, յաջողութիւնը, խմբակին առաջնորդին և իր փոխանորդին կատարեալ գործակցութեան կախում ունի: Այս պատճառաւ առաջնորդին կը ձգուի իր փոխանորդը ընտրելու իրաւասութիւնը:

Խմբապետը անշուշտ այս մասին կրնայ իր կարծիքը յայտնել այս կամ այն սկսուաին թեկնածութիւնը առաջարկելով բայց վերջին խօսքը առաջնորդին կը պատկանի: Խմբապետը ամենամեծ սխալը գործած կ'ըլլայ, առաջնորդի փոխանորդի ընտրութեան մասին երբ առաջնորդին բռնադատէ իր թեկնածուն ընտրել: Նոյն իսկ երբ առաջնորդը սխալ ընտրութեամբ իր օգնականը ընտրէ, խմբապետը պէտք չէ միջամտէ առաջնորդի օգնականի ընտրութեան՝ որպէսզի առաջնորդը իր սխալը ինքն իսկ հասկնայ:

Ստէպ խմբապետները կը գանգատին թէ առաջնորդները անկարող են խմբակը առաջնորդելու, թէ անոնք միայն տեսականօրէն գիտեն իրենց պաշտօնը, թէ երբ գործելու տանն դայ իրենք կ'առիպուին ամէն հոգ ստանձնելու: Ինչպէս ըսինք արդէն առաջնորդները հրամայելու կարող և իրենց ընկերներուն ազդող սկսուաներ ըլլալու են: Խմբապետը կրնայ ընտրութեան մէջ խարուիլ, ըստ իս ամէնէն լաւ ընտրութիւնը բնական ընտրութիւնն է, այսինքն երբ առաջին օրէն խումբը բազմաթիւ սկսուաներով, կազմուի, ինչ որ գործը շատ զժուարիս կացութեան մէջ կը ձգէ, խմբակներու բաժնելով խումբը շարաթակուն խիտ հաւաքումներով զանազան փորձերու և խմբակային մարզանքներ կատարելու միջոցին, խմբակին անդամներուն փոխն ի փոխ առաջնորդի դեր կը տրուի: Քանի մը հաւաքումէն վերջ իսկ երևւան կ'եղայ խմբակէն սկսուած մը որ արդէն իսկ կարող է հրամայելու և ազդելու, խմբակը արդէն բնականօրէն կ'սկսի առաջնորդուիլ և հրամայուիլ այս սկսուանէն, խմբակի առաջ-

նորդը այսպէս ընտրելով, խմբակը օժտուած կ'ըլլայ լաւագոյն առաջնորդով — անյարմարութիւնները բացառութիւն են—:

Պէտքն Բաուըլ իր «Scouting for Boys» գիրքին մէջ այսպէս չի տեսներ խումբերու կազմութիւնը, որովհետեւ մեր մէջ գոյութիւն ունեցող պարագան չէ ներկայացած իրեն: Գիւղի մը մէջ տարիներով եղած բրօքականաէն վերջ քառասուն յիսուն սկսուած կրնայ գոյութիւն ունենալ, մինչ մեր մէջ արդէն առաջին օրէն ունեցանք 20—30 սկսուաներէ կազմուած խումբեր: Երբ խումբը սկիզբները փոքր թիւով սկսուաներէ կազմուած ըլլայ, խմբապետը պարտաւոր է շարաթակուն բազմաթիւ հաւաքումներով սկսուական գիտութեանց մէջ զարգացել իր սկսուաները, անոնք պէտք է ընդունի իր իր ապագայ առաջնորդները:

Շարունակելի ՊԻՄԷՆ ՍԱՀԱԹՃԵԱՆ

Սկսուական նամակներ

Հրայրին

«Արծի» խմբակին առաջնորդ ընտրուելուն առթիւ

Կը յիշե՞ս այն վայրկեանը սիրելիս երբ խումբապետիդ թոյլտուութեամբ, խմբակիդ ամենափոքր սկսուածը, երկու ճերմակ երիզներ տալով քեզի ըստ՝ «ասկից վերջը մեր խմբակը գուն պիտի առաջնորդես»:

Այս յարգանքին փոխարէն խումբըդ բարեւելով միայն գոհացար՝ առանց բառ մը լսելու: Ուրեմն, լուրջութեամբ ուռիս հաստատական պատասխանդ թէ՛ փոքր սկսուաին կողմէ անկեղծութեամբ քեզ յանձնուած պաշտօնը կ'ընդունիս:

Ասկից վերջ, «Արծի» խմբակը գո՛ւն պիտի առաջնորդես, բայց ո՞ւր, ո՞ր ճամբայէն, աջ թէ ձախ: Հոս է զոհողութիւն պահանջող պարտականութիւններդ:

Այդ զոյգ մը երիզները ընդունելով, անշուշտ զգացիր որ՝ դրսեբերութէն հեշտին, բայց իրականութեան մէջ քիչ մը զժուար պաշտօն մըն է ստանձնածդ:

Կարծեմ յաւակնութիւնը չ'ունեցար անպատճառ աստիճանաւոր մը ըլլալու, և ի ցոյց մարդկան երեւալու: Չե՞ս գիտեր որ՝ աշխարհի ժողովուրդները վարող և զանոնք առաջնորդող մեծ մեծ մարդիկը, իրականութեան մէջ ընտրողներուն գերիներն ու ծառաներն են: Պէտք է գիտնաս որ՝ պաշտօններն ու աստիճանները երբէք մարդս չեն կրնար անմա-

հայնել ու բարձրացնել, որքան ատեն որ կուրծքերու տակը շ'ունին իսկական աստիճանները, այսինքն մարդկային առաքինութիւնները :

Այդ առաքինութիւններու կարեւորներն են սիրել նմանները և զանոնք բարձրաձնել սուտէն ու կեղծիքէն վեր : Ունենալ համակերպող և հնազանդ ոգի, հաստատրիմ, աշխատասէր, անտեսող և ձեռներէջ ըլլալ :

Վստահ եմ որ չ'ես ըլլար նման այն պետութեան, որոնք, ցաւալիօրէն, իրենց նմաններուն հրամայելուն մէջ հաճոյք մը կ'զգան : Նայէ որ, սկսուտական համազգեստին խորհրդանշանը եղող պարզութեան և անկեղծութեան՝ մարմնացումն ըլլաս :

անոնց բարոյականին և բարօրութեան տուաջին պայմանը եղող ընկերսիրութիւնը : «Արժիւններու դ պիտի սորվեցնես, ուրիշին օգնելու մէջ միայն հաճոյք փնտռելու վտեմ գաղափարը, անասուններու հանդէպ անողոք չ'ըլլալը միշտ բացատրելով թէ՛ անոնք ալ Աստուծոյ արարածներն են, ապա ուրեմն պէտք է վաշկեն իրենց դորովի բաժինը, մեր բանական մարդոցս կողմէ :

Լայն կերպով բացատրէ, մեծ վարդապետութիւնը՝ քրիստոնէութիւնը, որ մարդկութիւնը խաւարէն դէպի մեծաճաճանչ լոյսին, առաջնորդեց :

Նոյնպէս մի մոռնար, հայուն եկեղեցին և անոր Ս. Հայրերը որոնց կը պարտինք մեր ազգային ինքնուրոյն եկեղեցին և լեզուն :



Իզմիրի սկսուտներ արշաւի մէջ :

Կ'ուզեմ յիշեցնել քեզի, ասկից մտաւորապէս տարիուկէս առաջ, ամառ կիրակի որ մը, մայր բնութեան քաղցր հովանիին տակ, բազմութեան մը առջեւ կատարուած արարողութիւնը . ձեռքը Ազգային Դրօշին վրայ դրուած պատուոյդ վրայ ըրած սկսուտական երգումը :

Խուտումդ յարգած ես, ապացոյցը, առաջնորդի աստիճան ստանալդ է : Ի՛նչ հաճելի և բազմալի գործ, ունենալ ուժը համակրելի ընկերներ, զանոնք առաջնորդել : Իսկապէս վտեմ պարտականութիւն :

Ուրեմն, ասկից վերջ երբ խուճրով, սա անտանելի և խոճարուր քաղաքներէն հեռու, պտոյտի և արչաւի երթաք, խմբակիդ պիտի սորվեցնես բնութեան գեղեցկութիւնները և

Սիրելի Հրայր, այս մէկ քանի պատուէրներս, վստահ եմ որ՝ միշտ հասկնալի լեզուով այսինքն մաքուր հայերէնով մը և ընդլայնելով կը բացատրես սկսուտներուդ :

Կը մնայ պարտականութիւններուդ ամենամեծը, որու մասին եթէ զրելու մոռնալի, կը կարծեմ որ պիտի ցաւէիր : Հայրենիքդ, Բոլոր աշխատութեանցդ արդիւնքին շտեմարանը, սպիտակափայլ Մասիսն ու Արարատը, հո՛ն, թշուառութեանց երկիրը : Եթէ կրնաս ամէն ատեն խօսէ, այդ մեծ հեռապատկերին, անցեալի փառքերէն : Բոլոր զոհողութիւնները, որոնք սիրով կը տանիս, ամեն'նքը ամեն'նքը անոր համար են : Այն ուժը հաս հայորդիները, որոնք բարի, արի և վեհանձն մարդ պատրաս-

ԲԱՐՉՐԱՅԻՐ-ԲԱՐՉՐԱՅՈՒՐ

Հայ Ակադեմիկոս

Երեկի ստորուկ ու անարիւն ցեղիդ, այսօրուան
բաջարի ու ներուժ պատանի:

Երեկի ցաւոտ ու անսերունջ ցեղիդ այսօրուան
խոնարհակոջ բազուկ ու ազատաթիւ ոգի:

Երեկիք անդուած ու ցիրցան օջախիդ այսօր-
ւան վերանորոգ ուժ ու վաղուան հսկայ
պարիսպ:

*
**

Ամպահեւ ու փոթորկաբեր գիշերուան մը ու-
կեզիսակ ու արփաւէտ արշալոյսն ես
դու:

Անհրապոյր ու ցո՛ւրտ ճմուռէն յետոյ բացող,
վարդաշուրթն ու նարկիզագեղ զարճենն
ես դու:

Արագածներուդ ու Մասիսներուդ պէս բար-

ծրասլաց հինգ դարու ստրկութենէ մը
արիւնաբոյր, փիւնիկի մը պէս յառնող
ցեղիդ օրհնեալ ու ազնուատոհմ շառա-
ւիղն ես դու:

*
**

Դո՛ւ աստղաբիր պատանի,
Սուրա՛ւ արծուեթոխի թափովդ նպատակիդ,
Սուրա՛ւ արագ, թող հրագիծ շանթն խակ չի
կարողանայ հասնիլ քեզի:

Դո՛ւ նոր սերունդի, նոր գաղափարի ու հին
երազանքու թարմ աւիւն,

Սուրա՛ւ արծիւէն արագ, նետէն ալ կտրուկ
դէպի նպատակիդ, նպատակիդ միայն:

Բարձրացի՛ր արտոյտէն թեթեւ, նիզակէն խի-
զախ դէպի սուրբ նպատակիդ:

Բարձրացի՛ր, որպէս զի դու քու օրհնեալ բա-
զուկովդ բարձրացնես ամբողջ ցեղդ պատ-
մական: Գ. Ս. ՄՈՎԱԿ

տելու կ'աշխատախ, օր մը, զանոնք պիտի
յանձնես, մեր պաշտելի հայրենիքին: Ուրիմն
հայրենիքդ պղտկ պարտականութիւն մը տը-
ւած է քեզի կոտորակուած հայութենէն՝ մի
միայն ութը հատ «Արծիւ»ներու, ճախրումի
կրթութեան պարտականութիւնը:

Բայց գիտե՞ս թէ՛ մեր հայրենիքը պէտք
ունի այնպիսիներու որոնք ընդունակ ըլլան
ճտպագան յաջողութեամբ դիմաւորելու, ըլլայ
պատերազմի ատեն կամ թէ՛ խողաղու-
թեան ժամանակի ինչպէս կ'ըսէ Զօր. Պէտրն
Բառւլ: Հոս զանց պիտի աւնեմ, պատերազմի
ժամանակի կազմակերպութեան մասին գրելու,
և քեզի պիտի յիշեցնեմ, խողաղութեան ժա-
մանակի պատերազմը, Այն որ պատերազմ-
ներու ամենէն ահռելին ու զարշիլին է, ուր մա-
հաճոտ վառօդն ու թնդանօթը գործ չ'ունին
այլ սա հաղարաւոր մարդիկը, որոնք հո՛ս հո՛ն,
կ'երթան, կու գան, իրար կը խաբեն, կը կո-
ղոպտեն, առանց սպառնալիքի: Կ'ամբարոյսա-
նան, կ'ամբարոյսացնեն, մարմնով և հոգւով փը-
տածներ, իրարու գէժ հաղար ու մէկ տեսակ
մեքենայութիւններ կը լարեն: Այս պատե-
րազմն է որ՝ կ'ուզէի հասկցնել, և քու ալ

գործիդ դժուար ու վսեմ կողմը այստեղ է:
Աշխուժ և ուժով կեցիր որ՝ արդ պատերազմի
գնդակներէն մին վրիպելով, չը վիրաւորէ
«Արծիւ» ի բոյնը:

— Ես պէտք ունիմ, ազնիւ, պարկեշտ և
մոտեւանդ վեհօգի աղոց, կ'ըսէ մեր հայրե-
նիքը, որոնք խողաղութեան ձիթենին միշտ
ձեռքերնին ունենան, ինչպէս դուն արծուա-
նշան դրօշիկդ:

Երկու խօսք ևս ունիմ: Տղաքդ ուղղա-
մտութեան վարժեցուր: Ուղղամիտ իրենց բո-
լոր գործերուն մէջ, ուղղամիտ ըլլալ տունը,
դպրոցը և վերջապէս իրենց ամբողջ կեանքի
ընթացքին: Մի մտնար յիշեցնելու որ՝ վաղը
ամէն մէկը պիտի դառնան սկստաններու կամ
ժողովուրդներու առաջնորդողներ, պիտի մըտ-
նեն կեանքի ասպարէզը, ըլլալով հանրային
մեծ պաշտօնեաներէն սկսեալ մինչև պարզու-
նակ հողագործը, բայց կը կրկնեմ, յաջողելու
միայն և գլխաւոր միջոցը ուղղամիտ ըլլալն է:

Եթէ կարենաս գործել այս ուղղութեամբ
այն ատեն պիտի ըլլաս իսկական սկստե՛ս-
ուազնորդը:

Յ. ԹԻՒԹԻԻՆՃԵԱՆ

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

Աճկախ կարծիքներ.

ԱԹԼԵԹԻԿԸ... ԻՆՉՊԸՍ «ՆԵՐԿԱՐԱՐԻՆ ԿԱՐԱՍԸ»

Ողիմպիական խաղերու միջազգային մրցումները մտա տաննէն տեղի պիտի ունենան. Բերաչի մասնաճիւղի խաղալայրէն դատելով, կ'ենթադրեմ թէ քամէն չիտղձ նոր կորսով մը, խանդավառութիւն մը կը տիրէ. եղանակին

լու փորձերը և զանազան տեսակ սասումները, Տեսարանը սքանչելի է, և որքան որ հաճելի է ատանց մասնակցիլը, նոյնքան ալ հաճելի է ինձ համար դիտելը. ոչ միայն այլ շարժումին գեղեցկութեան կամ հեռաքրքրութեան համար, այլ որովհետեւ նոյն ժամանակ ևս զստունակութիւն մը կ'զգամ, տեսնելով այլ երիտասարդները, որ հեռու պարասրահներէ,



Ռերա-Շիշլի 1921 ի մասնաճիւղային մրցումներէն:

հետ մարզիկներու գարունն ալ եկեր է ու սինէմաներէ կամ փողոցի շրջազայումներէ. այժմէն նախափորձեր կը կատարուին. ահա՛ իրենց մարինը առողջապահիկ և բայոյական վազքերը, նիզակ, սիսուտակ, գունտ նետու կերպով կը գործածեն:

. . . Բայց, դիտելու միջոցիս այդ մար-
զիկներուն մէջ կը նշմարեմ, կամարածեալ կըր-
նակով, կուծքը ներս, ուսերը առաջ և խա-
խուտ կեցուածքով մասնակցողներ, և անգամ
մ'ալ կը խորհիմ արլէրիքի պայմաններու
մասին որոնց բնաւ չեն համապատասխաներ
այդ տկար կազմուածքով մասնակցողները:

Ամէն ցատկող կամ վագող, արլէր չէ, և
սակայն բոլոր փափաքողները առաջին առթիւ
այդ փորձերուն կը մասնակցին, ու արլէրիք
կը վերածեն ճերկարարին կարապը» ին.

Այսպէ՞ս պէտք է ըլլայ, թէ ոչ, նախ քան
արլէրիք փորձելու սկսիլը պէտք է որ արդէն
մարմինը բաւականաչափ մարզուած, ուժեղացած,
ձեւաւորած ըլլայ, որպէսզի յետոյ այդ զորա-
ւորագոյն փորձերը բնէ: Շուեռտախան չըրած
արլէրիք բնելը կը նմանի՝ ձմեռուան մէջ-
տեղը առաջին անգամէն իսկ պաղ ջուրով լո-
գանք բնելու:

Մնաց որ, մրցումներն են շատերը արլէրիք
փորձելու մղողը, և առ հասարակ ասոնց տե-
ղի ունենալէն միայն երկու ամիս առաջ է որ
կ'սկսին այդ փորձերուն, իսկ տարւոյ մնաց-
եայ ամիսները ?

Ոմանք առանձին արդէն շուեռտական մար-
զանք կ'ընեն, սակայն շատ քիչ է ասոնց
թիւը, բայց եթէ այդ ճիւղը անտես չ'առնուի
և զիրենք վարող մը ըլլայ, պատրաստ են սի-
րով մասնակցելու:

Մարմինը առողջ պահելու, զորացնելու,
ճկունցնելու և գեղեցկացնելու համար, պա-
տանիներուն՝ շուեռտական փորձերը անհրաժեշտ
են, իսկ երիտասարդներուն՝ առանց շուեռտ-
ական բրած ըլլալու, ողիմպիականները շատ
չ'են նպաստեր:

ՊԻՍԷՆ ՊԵՐԷԿԵԱՆ

Ծանօթ. Վերի գրութեան համակարծիք ենք թէ
առանց ֆիզիքական յարմար կազմ մը ունենալու,
արլէրիքի հետեւիլը արդիւնաբեր չըլլար: Սակայն գի-
տակից մարմնամարզիկ մը արլէրիքի հետեւելէն ա-
ռաջ եւ վերջը կրնայ շատ լաւ իր ֆիզիքականը զորա-
ցնել, եթէ կամր ունենայ: Փարով մեր մէջ շուեռտ-
ականի նման կենսական մարզանքներու պակասին, ա-
տոր պատճառները շատ են, սակայն գլխաւորագոյնը
մեր երիտասարդներուն մօտ զինուորական կարգապա-
հութեան չզոյւթիւնն է. մենք բռնութեան տակ, ան-
հատական ջանքերով վերադարձ անհատներ ենք,
եւ այս անհատականութեան կառչած մնացած ենք
ըլլայ ծուռ կամ ուղիղ: Այն օրը որ մարզանքները
ընթրին ընդունուին դպրոցներէ ներս իրը պարտա-
րիչ պահանջը մը, մենք ալ կ'ունենանք ակնի, առողջ
կարող մարզիկներ, եւ աթլէթներ:

Վ. Ս. Փ.

ՊԱՍԷԹՊՈՒԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԿԱՆՈՆ 8

ԽԱՂԱՆՈՒ ՅՍՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐ (Regulation)

ԽԱՂԻՆ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ, ԴԱԴԱՐ (Intermission),
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄՔ ՓՈՒՍՈՒԱՄ ԺԱՄԱՆԱԿ

Յօդ. 1.— Խաղը պէտք է սկսի Իրաւա-
բարին կողմէ, որ գնդակը պէտք է երկու հա-
կառակորդ խաղացողներու միջեւ վեր նետէ,
ինչպէս բացատրուած է այս կանոնին 5 և 6
Յօդուածներուն մէջ: Խաղը պէտք է 20 վայր-
կեանոց երկու կիսախաղերէ բաղկանայ, 10
վայրկեանի միջնադադարով մը: Կերկայիս խաղի
ժամանակամիջոցը այս է:

Խմբապետներու փոխադարձ համաձայնու-
թեանը այս ժամանակը կրնայ փոխուիլ: Երբ
ժամապահներու զանգակի ձայնէն ամիջապէս
առաջ կամ անոր հետ միաժամանակ Փատու մը
կատարուի, ազատ նետելու փորձի մը համար
ժամանակ պէտք է յատկացնել:

Ծանօթ. երկրորդական վարժարաններու միջեւ
տեղի ունեցող խաղերու ատեն, կամ այն տեսակ խա-
ղերու մէջ ուր խաղացողները պատանիներ են, յանձ-
նարարելի է որ խաղը բաղկանայ ութը վայրկեանոց
չորս քառորդներէ, առաջին եւ երկրորդին միջեւ երկու,
երկրորդ երրորդ քառորդներուն միջեւ 10, իսկ երրորդ
չորրորդին միջեւ եւս երկու վայրկեանի դադարով մը:
Իսկ տասնչորս եւ աւելի վար տարիք ունեցող տղոց
համար կրկնապէս յանձնարարելի է որ քառորդները
բաղկանան 6 վայրկեանէ, առաջին եւ երկրորդին երեք
և կէսին տասը վայրկեանի դադարով: Երկու կամ ե-
րեք վայրկեանի դադարներուն ատեն խաղացողները
պէտք չէ հեռանան խաղադաշտէն, ոչ ալ մարմնի մաս-
նաւոր խնամքներ պէտք է ստանան կամ իրենց կոշիկը
փոխեն:

ԴԱԴԱՐԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄՕՏ

ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 2.— Կիսախաղի դադարին վերջաւո-
րութենէն երեք վայրկեան առաջ խմբապետ-
ներուն ազդարարութիւն պէտք է ըլլայ, եթէ
Իրաւաբարին խաղը սկսելու հրաման տալէն
մինչեւ մէկ վայրկեան վերջ, մէկ կամ միւս
խումբը խաղադաշտին վրայ պատրաստ չէ,
ըլլայ երկրորդ կիսախաղին սկիզբը կամ ո եւ է
պատճառով մը բացառիկ դադար (time out)
կատարուելէ վերջ խաղը սկսելու ատեն,
գնդակը խաղի մէջ պիտի դրուի այնպէս՝ ինչ-
պէս պիտի ըլլար եթէ երկու խումբերն ալ
իրենց պատրաստի դիրքին մէջ ըլլային:

ԿՈՂՈՎՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յօղ. 3.— Առաջին կիսախաղին այցելող խումբը իրաւունք ունի կողովը ընտրելու: Երկրորդ կիսախաղին կողովները պէտք է փոխուին:

ՈՒՅԷ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ ՆԵՏՈՒԱԾ, ԵՒԼՆ. ԳՆԴԱԿԸ

Յօղ. 4.— Գնդակը կարելի է ունէ ուղղութեամբ նետել, հարուածել, ստատտել տալ (bounced), գլտորել կամ յաջորդաբար հարուածել:

ԳՆԴԱԿԸ ԵՐԲ ՊԵՏՔ Է ԿԵԴՐՈՆԵՆ ՎԵՐ ՆԵՏ:Լ

Յօղ. 5.— Գնդակը կեղբոնէն խաղի մէջ կը դրուի:

Ա. իւրաքանչիւր կիսախաղի, քառորդ խաղի կամ յաւելումածական ժամանակի սկիզբը, Բ. կօլ մը ըլլալէն վերջ,

Գ. Ապօրինի ազատ նետումք մը կատարուելէ վերջ:

Դ. Երբ գնդակը կողովին յենարաններուն մէջ տեղաւորուի,

Ե. Կրկնակ ֆաուլի մը հետեւանքով կատարուած վերջին ազատ նետումքէն վերջ,

Հետեւեալ կերպով:

ԿԵԴՐՈՆԻ ԽԱՂՍՅՈՂՆԵՐՈՒՆ ԴԻՐՔԸ

Իւրաքանչիւր կեղբոնի խաղացող պէտք է իր երկու ոտքով կայնի կեղբոնի շրջանակին իւրեն պատկանող կէտին մէջ, իր մէկ ձեռքը կունակի միջին մասին վրայ (Տես Բուլի նկարը): Ձեռքը այս վիճակին մեջ պէտք է մնայ մինչեւ որ գնդակը մէկ կամ միւր նոյն ատեն երկու խաղացողներուն կողմէ հարուածուի: Միւս խաղացողները կրնան խաղադաշտին վրայ երկնց ուղած գիրքը անել, կը բաւէ որ Իրաւաւորին կամ կեղբոնի խաղացողներուն հետ չչփոթուին: Իրաւաւորը պէտք է գնդակը դէպի վեր նետէ կեղբոնի խաղացողներուն միջեւ Երկրոնի խաղացողներու գետնին ուղղահայեաց բաւ գիրքը խաղը սկիզբից, այնքան բարձր որ խաղացողներէն ոչ մէկը կարենայ հասնիլ, և այնպէս մը որ գնդակը երկուքին միջեւ իյնայ:



ԳՆԴԱԿԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԵԴՐՈՆԻՆԵՆԵՐԸ

ՊԻՏԻ ՀԱՐՈՒԱԾԵՆ

Յօղ. 6.— Երբ Իրաւաւորը գնդակը կեղբոնէն խաղի մէջ կը դնէ, պէտք է իր սուլիչով սուլէ երբ գնդակը իր բարձրագոյն կէտին կը հասնի, ուրիշ վերջ պէտք է հարուածուի մէկ կամ երկու կեղբոնի խաղացողներուն կողմէ: Եթէ գնդակը երկու ցատկողներէն ունէ մէկուն կողմէ հարուածուելէ առաջ գետնին դափ, Իրաւաւորը դայն կրկին խաղի մէջ պէտք է դնէ նոյն տեղին մէջ:

ԿԵԴՐՈՆԵՆ ԴՈՒՐՍ, ՈՒՅԷ ՏԵՂ ՍԸ ՎԵՐ ՆԵՏՈՒԱԾ ԳՆԴԱԿԸ

Յօղ. 7.— Երբ Իրաւաւորը, կեղբոնէն դուրս տեղէ մը գնդակը վեր նետէ, խաղացողները իրարու նկատմամբ յարաբերական նոյն դիրքը պիտի առնեն, ինչպէս կեղբոնէն նետելու ատեն:

ԽԱՂԸ ԵՐԲ ԿԸ ՎԵՐՁԱՆԱՅ

Յօղ. 8.— Խաղը պէտք է վերջանայ ժամապահներուն ազգի ձայնին վրայ, որ խաղին վերջաւորութիւնը ցոյց կու տայ (Տեսնել կաւոն 7 ի Յօղ. 6 ի ծանօթ.ը):

ԿԱՆՈՆ 9

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՕԼԵՐՈՒ ԱՐԺԷՔԸ

Յօղ. 1.— Խաղադաշտէն եղած կօլ մը 2 կէտ պէտք է հաշուել իսկ ազատ նետումքէ մը եղած կօլը 1:

Յօղ. 2.— Խաղի մը արդիւնքը պէտք է որոշել, խաղի ընթացքին ձեռք բերուած առուելագոյն կէտերու արձանագրութեամբ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Յօղ. 3.— Եթէ երկրորդ կիսախաղի վաւահանին երկու կողմի արձանագրութիւնները իրարու հաւասար են, առանց յապաղելու և կողովները փոխելու խաղը պէտք է շարունակել 5 վայրկեան յաւելումական ժամանակով մը (extra period), կամ այնքան անգամ 5 վայրկեան որքան որ պէտք պիտի ըլլայ հաւասարութիւնը կտարելու համար: Իւրաքանչիւր յաւելումական ժամանակ պէտք է նկատել երկրորդ կիսախաղին շարունակութիւնը, բայց իւրաքանչիւր յաւելումական ժամանակներու սկզբնաւորութեան գնդակը խաղի մէջ պէտք է դնել կեղբոնէն:

ԽԱՂԱՆՈՒ ՄԵՐԺՈՒՄԸ

Յօդ. 4.— Ու ե կ խա մը որ Իրաւարարին հրահանգին չ'անտարով կը մերժէ խաղալ, խաղը կը կորսնցնէ:

ԿՈՐՍՈՒԱՍ ԽԱՂԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 5.— Կորուած խաղի մը արձանագրութիւնն է 2—0:

Տախտակի լաւագոյն արտերը եւ անց-
ածուած Գոստիկի կերպով հարմար
տախտակի արտերը



Միջին արտերը եւ անց-
ածուած Գոստիկի կերպով հարմար
տախտակի արտերը

ՄՐ. ԲԵՒՋԱՆԴ ԿԵՕՋԻՒՊԵՅԻՒՔԵԱՆ

ԿԱՆՈՆ 10

ՍԱՇՄԱՆԷՆ ԴՈՒՐՍ

ՍԱՇՄԱՆԷՆ ԴՈՒՐՍ ԵԼԼՈՂ ԳՆԴԱԿ ՄԵ ԻՆՁՊԷՍ

ԽԱՂԻ ՄԵՋ ՊԵՏՔ Է ԴՆԵԼ

Յօդ 1.— Եթէ խաղի* ընթացքին ու ե կ առեն գնդակը սահմաններէն դուրս ելլէ, Իրաւարարին կողմէ պիտի յայտարարուի ե կրկին խաղի մէջ պիտի գրուի՝ գնդակը սահմանէն դուրս հանող խաղացողին հակառակորդի մը կողմէ որ՝ սահմանէն դուրս գնդակին անցած տեղւոյն վրայ ուղղահայեաց զիրքով պէտք է կանգնի: Այդ զիրքին մէջ կրնայ գնդակը նետել, ոստոտակ տալ կամ գլտորել, խաղադաշտին մէջ գտնուող ուրիշ խաղացողի մը: Իրաւարար պիտի որոշէ այն հակառակորդը որ գնդակը խաղի մէջ պիտի դնէ, ընտրելով այն որ զբնդակին դուրս ելած կէտին մօտ կը գտնուի:

Ծանօթ. Եթէ ու ե կ պատճառով սահմաններն դուրս գտնուած միջոցը սահմանափակ է, մէկ կամ միւս խաղերն ոչ մէկ խաղացող կրնայ սահմանէն դուրս գտնուող խաղացողին երեք արքէն աւելի մօտենալ: Այս անպատեհութեան առաջըր արձեւելու համար լաւագոյն է սահմանի զիծերէն երեք ոտը ներսէն բարակ զիծ մը բաշել:

ԳՆԴԱԿ ԻՆՁՊԷՍ ԽԱՂԻ ՄԵՋ ԴՆԵԼ ԵՐԲ ԻՐԱՒԱՐԱՐԸ
ՎՍՏԱՅ ՁԷ ԹԷ ԳՆԴԱԿ ՈՎ ԴՈՒՐՍ ՉԱՆԱՍ Է

Յօդ. 2.— Եթէ Իրաւարարը չկարենայ որոշել այն խաղացողը որ գնդակին սահմանէն դուրս ելլելէ առաջ վերջին անգամ զպած է պէտք է գնդակը խաղի մէջ դնէ, սահմանի

զիծէն գնդակին անցած կէտին, ուղղահայեաց զիրքով, մօտաւորապէս երեք ոտք դէպի ներսէն, ընտրելով երկու հակառակորդներ՝ որոնց միջեւ վեր պէտք է նետէ բռնուած զբնդակի (held ball) նման:

ԿԱՆՈՆ 11

ԲԱՑԱՌԻԿ ԴԱԴԱՐ (time out)

ԲԱՑԱՌԻԿ ԴԱԴԱՐ ՄԻԱՅՆ ԻՐԱՒԱՐԱՐԻՆ ՇՐԱՍԱՆԻՆ ՎՐԱՅ

Յօդ. 1:— Բացառիկ դադար կը յայտարարուի միայն Իրաւարարին հրահանգին վրայ:

Իրաւարարը բացառիկ դադար կը յայտարարէ, կրկնակի ֆաուլի մը արկածի ենթարկուած խաղացողի մը, խաղացողներու փոխանորդելու պարագային կամ նետուեալ պարագաներուն մէջ խմբապետի մը կողմէ եզած խնդրանքին վրայ:

Սմբապետի մը կողմէ եզած խնդրանքին վրայ՝ բացառիկ դադար կը յայտարարուի միայն երբ գնդակը իր խաղերէն ձեռքը կը գտնուի՝ րացի փնտուելու պարագայէն:

Յօդ. 2.— Բացառիկ դադար պէտք է յայտարարել նետուեալ պայմաններու մէջ,

Ա.— Երբ բացառիկ դադար կը խնդրուի խմբապետի մը կողմէ:

Բ.— Երբ խաղացողի մը արկածի ենթարկուելու պարագայէն, փոխանորդութիւն մը երևտուն երկվայրկեանէն աւելի ժամանակ կ'առնէ:

Գ.— Արկած մը պատահելու պարագային կատարուած փոխանորդութիւն մը, երբ մէկ վայրկեանէն աւելի ժամանակ կ'առնէ, Բացառիկ դադարը ոչ մէկ պարագայի մէջ պէտք է երկու վայրկեանէն աւելի ժամանակ առնէ:

Խաղի ընթացքին իւրաքանչիւր խաղերի համար միայն երեք խնդրուած բացառիկ դադարի կարելի է գահայում տալ:

Ծանօթ. Տեսնել Բացառիկ դադարի մասին Կանոն 7 Յօդ. 4:

ԲԱՑԱՌԻԿ ԴԱԴԱՐԷՆ ՎԵՐՋ ԳՆԴԱԿ ՎԵՐ ԿԸ ՆԵՏՈՒԻ
ԲԱՅԻ ԱՅՆ ՊԱՐԱԳԱՅԷՆ ԵՐԲ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԱՌԱՋ
ՖԱՌԷԼ ՎԱՍ ԱՌԹ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՍ Է

Յօդ. 3.— Երբ Իրաւարարը բացառիկ դադար կը յայտարարէ, խաղը վերսկսելու առեն, գնդակը պէտք է վեր նետել հակառակորդ խաղերի երկու խաղացողներուն միջեւ որոնք խաղը ընդհատուած առեն գնդակին ամենամօտ կը գտնուին, րացի այն պարագայէն երբ խաղը դադարած առեն գնդակը սահմանէն դուրս ելած կամ ֆաուլի մը կատարուած է: Այդ պարագաներուն գնդակը խաղի մէջ պէտք է գնել սահմանէն ներս նետելով կամ ֆաուլի փոխարէն ազատ նետուածք մը կատարելով:

(Նարանակելի)

ՀԵՇԱՆԻՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԻՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ

ԴՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ներկայ յոգուած իս նպատակն է ուսումնասիրել հեծանուորացու թեան զբոսական և հանգստական կողմերը միայն և ոչ թէ անոր մրցումներու և հանգստաներու մէջ երևան բերած արժէքը և հետաքրքրութիւնը:

Մենք փոքր տղայ և երիտասարդներու համար կը թուլատրենք միայն խրթին և սրտի մտակալն ու խաղերը, ձիոյ պահանջող տեսակները կը պատշաճին քսան տարեկանէ վեր երիտասարդներու, որոնք գրեթէ իրենց անման շրջանը լրացուցած և կանոնաւոր ֆիզիքական կրթութեան ենթարկուած են:

ՄԱՐԶԱՆՔԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Աշխատութեան քանակի տեսակետով, մարզանքները կրնանք երեքի բաժնի մեղմ, միջակ և թուղն, աշխատութեան որակի տեսակետով անոնք կը բաժնուին ուժի, արագութեան և դիմացկունութեան մարզանքներու:

Աշխատութեան մեքենականութիւնը կրնայ ըզուր ինքնաշարժ կամ ոչ, բայց մարզանքին արդիւնքները կ'ըլլան ընդհանուր կամ մասնակի:

ՀԵՇԱՆԻՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՅԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հեծանուորացութիւնը բացօթի և հաւասարակշռութեան մարզանք մըն է և այդ մարզանքներուն բոլոր յատկութիւնները լիովին կը մարմնացնէ: Մարմնի ներդասանակ զարգացումը, թոյրեալ օդաւորումը կարելի է ձեռք բերել մի միայն մաքուր օդով, ինչպէս նաև կուրծքի զարգացումը՝ որ որուն քննութեան արագ շարժումներն յառաջ եկած օդի ծառային պատճառով շնչառութեան արդիւնքն է: Հեծանուորացութիւնը կարելի է աստիճանաբար անոր գործադրութեան եղանակին համաձայն, այսինքն, մեղմ, լայնաւոր կամ թուղն, Հարգուողութեն անիկա ուժի մարզանք մը, է, աւելի շուտ ան արագութեան մարզանք մըն է, քանի որ շատ քիչ ժամանակամիջոցի մը մէջ կարելի է մեծ աշխատանք արտադրել, առանց ընդհանուր զնդերային կազմուածքը յոգնութեան ենթարկելու: Հեծանուորացութիւնը բնախօսական տեսակետով ամենէն խնայողական աշխատանքն է և միջակ ուժի սպասումով մեծ արդիւնք մը յառաջ կը բերէ:

Հեծանուորքը գերազանցօրէն տակունութեան մարզանքի մը պատրաստութեան միջոցները ունի իր արամագրութեան տակ այսինքն, իր զնացքը զանգաղեցնելով կամ արագացնելով զնդերային ճիգի վատնումին և պահանջքին կրնայ իշխել:

Հեծանուորացութիւնը իր գերազանցութեան մեծագոյն մասը կը պարտի իր ինքնաշարժ և համաշախտակ ըլլալուն: Չափաւոր զնացքով, ուրեմն ան մտային աշխատութեամբ յոգնած կազմուածքու լու լուսագոյն միջոցներէն մին է: Մարք կրնայ իր ուղած չափով ընդհանուր արդիւնքներ ձեռք բերել շատ փոքր մտային և ֆիզիքական յոգնութեամբ մը եթէ ուղեգր թարմ և հանդիստ է:

ԿՐԹԻՑ ԱՐԺԷՔԸ, ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ

ԱՌԱԿԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեծանուորացութիւնը շուտով կը զարգացնէ ճարտարութիւնը, ճկունութիւնը, աչքին շափը և

վճռականութեան ոյին ու բազմաթիւ սովորներ կ'ընծայէ միտքը, գաղափարներ և կամքը մարզելու:

Ինչպայեպէս թեան տարուելով, ան կրնայ շատ մը անպատեհութիւններ ներկայացնել, շատ վտանգաւոր կերպով որքան չ'ենք ենթադրելու:

Նկատի ունենալով ֆիզիքական, բուսն աշխատանքին և մտաւորական լուրջ աշխատութեան միջև գտնուող անտարբեր ներհակութիւնը, հեծանուորացութիւնը եթէ չափազանցութեամբ գործադրուի, պատճառ կ'ըլլայ որ ենթական մտային զբաղումներն հեռանայ: Բայց այս պարագան կարելի է մասնաւորել մրցումներու, արշաւներու մասնակցողներուն:

Այս բոլորին հակառակ և ամենաառաջնակարգ արդիւնքներ ձեռք կը բերուին, եթէ հեծանուորացութիւնը խոնհմութեամբ ի գործ գրուի և մարզանքին բանաւոր սահմանները պահուին:

Թեթեւ և ինքնաշարժ զնդերային աշխատանքը կը նպաստէ մաքի աշխատութեան և ուղեղին գործունէութիւնը կը խթանէ:

ՄԵՔԵՆԱՆ

Հեծանուորացութեան տալիս մարզական բոլոր լու արդիւնքները վայելելու և նուազագոյն յոգնութեամբ առաւելագոյն օգուտ մը վայելելու համար, հեծանուորքը շատ մեծ խնամքով պէտք է մեքենան իր կազմուածքին յարմարցնէ և ոչ թէ ինք մեքենային յարմարի: Աշխատութիւնը պէտք է համեմատական ըլլայ ձեռք բերուելիք արդիւնքին հետ, առանց արտակարգ յոգնութեան:

Մանրիվներուն (manivelle) երկարութիւնը, անիւներուն տրամագիծը, նստարանին դիրքը և բարձրութիւնը շատ մեծ կարևորութիւն ունին հեծանուորին առողջութեան համար:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԱՐԶԱՆՔԸ

Նախ և առաջ կարեւոր է վարժուել ճարտարութեան կամ շարժումներու կրթութեան և սովիկա ֆիզիքական երեւոյթ մըն է: Յետոյ կուգայ գործարաններուն բնախօսական կրթութիւնը կամ մարզանքը, որուն շնորհիւ այս վերջինները աւելի լաւ, աւելի դիւրութեամբ և աւելի խնայողութեամբ կ'աշխատին:

Կարելի է նոյն իսկ բնագիտական վարժութիւն նկատել տեղունութիւնը, որ մարզուն գործարանաւորութիւնը յոգնութեան թոյներուն ազդեցութեան կ'ենթարկէ: Վերջապէս, վարժութեան մէջ կը մտնեն զգայնութեան հոգեկան երեւոյթներ կամ լը, դասողութիւնը, իմացականութիւնը, որոնք իրեն թոյլ կուտան լուսագոյն օգտուելու թէ իր մարմնէն և թէ իր գործիքէն:

Ենչարութիւնը պէտք է միմիայն քիթէն կատարուի, նոյն իսկ բերել պարզ արտաշնչումը թոյլատրելի չէ:

Ծ. Խ. — (Անշուշտ միմիայն ցուրտ և փոշոտ օդին հակառակ պարագային շրջառութիւնը ինչպէս վաղքի մէջ, հոս ալ ազատ պէտք է ըլլայ):

ՀԵՇԱՆԻՈՐԴԻՆ ՀԱԳՈՒՍՆԵՐԸ

Պէտք է թեթեւ և ճկուն ըլլան և չի սեղմեն ոչ միանները և ոչ ալ փոքրը:

ԱՆՆՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Մնեղառուիներ պէտք է ըլլայ կանանաւոր և անանկի տեսակեաց խնամքով գասաւորուած ըլլան, որպէսզի կարելի ըլլայ լաւագոյն արդիւնքները ձեռք բերել, բնականուր ասմամբ, յանախակի և թեթեւ ճաշերը յանձնարարելի են Ոյժի խնայողութեան ազդակ ենթադրուած անուշակերը, ինչպէս ալքոլը, թէյը, սուրճը, քաքառ, պէտք է խիստ չափաւորութեամբ, գործածուին և կամ բնաւ չի գործածուին:

Բարձրեր (cafeine), քոլան (kola), քոքան (coca) և միւս նմանարիւնակ զնգիքը բնաւ պէտք չէ գործածել:

Չափաւոր մեղեկէն և արտա բուսեղէն բժժիջը մեծ չափով տեղաւորութիւն ձեռք բերելու կը նպաստէ:

Այսպիսի՝ աննպաստեալ մը հազուութիւնը ուշ պատի կ'ըլլայ և զբնիէ բարձրին վաննատանայ կարճ ճաշէ մը վերջը Այս պէտքով կարելի կ'ըլլայ քոքանաւորութեան արտազբնիութեան ուժը կրկնապատելը Եւրոպայը, իբր անուշ, չի պարտաւորել իրեն վերադրուած յատկութիւններուն ամբողջութիւնը և շատ անգամ ալ անպատեհութիւն ուժի շաքարային բժժիջի մը ենթարկուիլը:

ԳՆԱՅՔԸ

Գնացքը և չափը պէտք է խնամքով աւտուտաւորուին և կանանաւորուին, ինչպէս նաեւ հանգիստներու տեսչութիւնը և բաժանումները:

Վարժութիւններուն, բնախոտային սահմանները գժուար է որոշել, որովհետեւ յոգնութեան փայտեղ զիմանալու կարողութիւնը զգալապէս կը տարբերի անձներու ազդեցականութիւնը կազմուածքին և փայտութիւններուն համեմատ:

Սակայն և այնպէս, երկար գնացքները կը պատշաճին միայն լաւ կազմուած շախտաներու, որ պար պէտք է իրենց օգուտին համար գժուտան շափաւոր գնացքով կարճ պատշտներով, միմյնայ և չի տասարդները կրնան աստիճանաբար աւելի մեծ նեւաւորութեանց վարժուիլ, առաջ սակայն իրենց ուժերուն սահմանը անցնելու:

Եթէ իրենց այդ վարժութիւնը լաւ աւտուտագուի, աստիճանաբար պիտի զգան թէ շատ աշխուստ արդիւնքներ սկսած են ձեռք բերել անուսորդութիւնէն:

Թերա 1922

Վ. ՆՊՐԵՏՏԵՆ

ԵՄԼՈԹ. Վ. Ս. Փ.էն.— շեմիւնիւնները պիտաւորաբար երկու տեսակի կը բաժնուին՝ բաց ճանրանկրու (route) և ճարթարուած մարզափայրերու (piste յատուկ գործիքներ: Ասոնց փոքրիկ շարժիչ անիւներուն (pignons) համեմատութիւնը տեսակի համեմատել իրարմէ կը տարբերին:

Այսպէս pisteի յատուկ գործիքներուն առջեւի pignonներուն տիւանները կ'ըլլան 22, 23, 24, 25 կամ 26 հատ, իսկ ետեւի թիւները 7 կամ 8 հատ:

Այս տիւաններուն զանազան համեմատութեամբը ճեմունեայ արգիւնքը մեռք կը բերուի:

6.04	28 X 7	տիւաններով
6.20	28 X 7	
6.61	28 X 7	
6.60	28 X 7	
6.90	28 X 7	
6.90	28 X 7	
7.10	28 X 7	
7.10	28 X 7	
7.40	28 X 7	
7.90	28 X 7	

Արժեքն՝ առջեւի ընցողը 22 և ետեւիքը 8 տիւաններէ բաղկացած ըլլայ, աւելին նուազ արագութեամբ (24-ի արագութեամբ 6.04 մէթր) կ'ըլլայ: Իսկ լաւագոյնն է 26 X 7 տիւաններով, որ կուտայ 7.90՝ մէկ արագութեամբ:

Իսկ ճանրու ետեւիքներուն տիւանները կ'ըլլան Առջեւիները՝ 44, 46, 48 հատ:

Ետեւիները՝ 16, 18, 20, 22 հատ:

Մնեղառուներու միւսից նմանեայ արգիւնքը մեռք կը բերուի:

4.40	28 X 7	տիւաններով
4.60	28 X 7	
4.70	28 X 7	
4.80	28 X 7	
5.00	28 X 7	
5.20	28 X 7	
5.30	28 X 7	
5.60	28 X 7	
5.80	28 X 7	
6.00	28 X 7	



ՊԱՍՔԷԹՊՈԼ

Եպիֆ 7 ին էր. և 72 տեղի սենյակ գաւաթափ շատ կարեւոր և նախաջրային միջուկներ առաջինը Savoir's Clutch իսկ երկրորդը (ուրբ Քոլէճի մարզադասներուն մէջ: Ընդդէմ Քոլէճի և ամերիկեան + All Stars իտալիկներուն միջեւ:

Ընդդէմ Քոլէճի իտալիկ իտալուց մին էր աշակերտներու, ուրջիներու և նախկին շրջանաւարտներու լաւագոյն իտալացիներէն, որոնք մաս կը կազմէր նաեւ Ք. Արքունի իսկ + All Stars իտալիկն ալ կը ներկայացնէր ամերիկացի նաւորներու, սպաններու և բարբառցիներու լաւագոյն ունեւոր:

Երկու միջուկներու մէջ ալ իտալացի Քոլէճ գերակշիռ կերպով յաջանանք ապագա շահուած կէտերու վրայ յարուստ 28, 29, 30 և 31-ի պէմ 26-Այսպէս Ռոպրտի Քոլէճ կը ներկայացնէր միջուկը արեւելքի պատրիարքի անդամներու համար:



Հեղինակ՝ EMILIO SALGARI

Իսպ. լեզ. գր. Զ. ՅԱՆՈՐՈՍ ԲՈՒՊԵՐՏԵՐՆԵՆ

ԺԲ. ԾԱՐԱԻՒ ՏԱՆՁԱՆՔԸ

Երկրաչափը խարուստ չէր երկու ամենաբազ գետերու հանդիպումէն ձեւացած մեծ յի յորձանք մը կը քաշէր շոգեմակոյիլը՝ որ կողերուն վրայ թաւալուելով, քիթին վրայ տառամուտելով, հեծելով, մեջիկով, կամայ կամայ կլլուելու վրայ էր:

Պարթըն, Մորիան, և Օ'քոնոր, դարձուած, նաւուն վրայ նետուող ալիքներէն կուրցած, շոգեմակոյիլին անկանտն ցնցումներէն թաւալաղլոր, երկրաչափի գոշումին ոտքի ցատկած էին, կանխելուքը փնտուելով: Մեքենափարը անոնցմէ մէկ ձեռքին ներքի զգալով, անմիջապէս բացաւ, լուցիկ մը քսեց ու զայն վառեց: Երկրիս ամենաքաջաւիրտ մարդուն արիւնը սառեցնելու կարող տեւարան մը դարդուեցաւ աչքին յանկարծ:

Հիւսիսակողմէն կատաղարար կ'իջնէր շոգեմակոյիլը բշոյ գետը, հարաւէն ալ կ'իջնէր աւելի բայն մտայլ, ու փրփրալից երկրորդ սահանք մը, մէջտեղը կը պտուտիէր՝ չարագուշակ, բայն ու երազ և կոհակներով յուզուած յորձանքը որ վարձուրելի կերպով կ'ոճնար:

Հուսախաբ ինքնիրեն լքուած, հոն կը դառնար գլուխ պտուտիկոյ երազութեամբ ու կեղծոնէն վեց կամ եօթ մեղր միայն հեռու էր վայրկեան մը, թերեւս կէս վայրկեան մը եւս, ան պիտի քաշուէր, պիտի կլլուէր փայտի կտորի մը նման:

Յուսահատութեան ունեց մը բրդաւ շոր մարդկանց կուրծքէն որոնք անդառնալի իրենք զիրենք կորսուած տեսան կայնած՝ մին միւսին մօտ, ուն սարսափէն գոռնատուած, ուրիշ մը կատաղութիւնէն, դիւթուածներու նման՝ անկարող կը դիտէին հրէշային ձագարը որուն վարձուրելի որսուումները կ'արձագանգէին, գետնուզիներու և քարայրներուն մէջ:

— Սրբ ձօն, Սրբ ձօն, գոշեց Պարթըն
— Օգնութիւն, տէր, դոտայ Օ'քոնոր սարսափէն յիմարած:

— Մեքենային գոշեց Սրբ ձօն թերեւս քան բան կորսուած չէ:

Մարիան նետուեցաւ մեքենային մօտ, բացաւ փուռը ու ձեռքը ներս խօթեց:

— Կրտսիկ մարտի է, գոշեց: Եւ ասկէ շատ պտուտակը ջախջախուած է:

Ենցած էր նոգեմակոյիլը ոչ մէկ բանէ զսղրւած, արագապէս կը յառաջանար՝ աջակողմին վրայ պոսկած հետեւելով այդ հրէշային ձագարին էջբը: Հետաւորութիւնը վայրկեանէ վայրկեան կը սպառէր, չըջանք երթալով կը փոքրնար Ողէտը անխտաւելի էր:

Երկրաչափը, անկարող իրմէն հաղար անգամ աւելի զօրաւոր գաղանի մը զիմաղբելու, տարօրինակ հանդարտութեամբ կը սպասէր որ շոգեմակոյիլը կ'ըլլուէր: Քովը Պարթըն և Օ'քոնոր կ'ոճնային յուսահատութիւն Մորիան նորէն ինքզինքը գտած, հանդարտութիւն կը հանուէր, դարձեալ գուրս ելլել յուսալով այդ գերեզմանէն:

Բողէները փայլալի պէս կ'անցնէին նոգեմակոյիլը միշտ դէպ յաջողովը կը հակէր, և կանխելի կարմորակ լոյսին մէջ կը տեսնուէր ցուռկին միւրճիւն ու ելլելը կատաղի ալիքներուն վրայ:

Երկու մեղր միայն մնացեր էր, երբ սատուիկ բաղխուած մը պատահեցաւ ցուռկին՝ առջեւ, Սրբ ձօն, հասկցաւ անմիջապէս որ տարօրինակ բան մը տեղի ունեցաւ: Թերեւս յուսոյ ճառագայլ մը շոգայ անոր սրտին մէջ: Պէտքի ցոռիկը խայտայաւ Ուսաջուանէն սկար՝ երկրորդ հարուած մը օրօրեց:

չոգեմակոյիլը ու քանի մը քայլ ետ մղեց: Սըր ձօն՝ դուրս երկնցաւ ու ձեռքերը երկնցուց որոնք խորտուբորտ աւարկայի մը հանդիպեցան:

— Բարեկամներ, ընկերներ, գառացի Սոսիսներ:

Սոսիսներ, Պարթըն, Օ՛Քանոր անմիջապէս վաղեցին:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուցին միարեւան:

— Ժա՛յտ մը, ըսաւ Սըր ձօն, կատաղեցէր և պինդ կեցէք:

Երեք որսորդները յուսահատ ճիգերով կառչեցան ժայռի զցրածքներուն, շոգեմակոյիլին չըջին արդիւնով այսպէս:

Սըր ձօն սոքերը ժայռին վրայ դրաւ: Այլևս չինք մեզր տարածութիւն չունէր, և երկու սար միայն ալիքներէն վեր կը մնար:

— Ազատեցա՞նք, հարցուց Պարթըն:

— Կը յուսամ: Չունի մը նեանցէ՛ք ինձի, պտուտակը փոխենք:

Պարթըն հաստատ շուան մը նեանց և Հուսախորտ կազուկեցաւ ժայռի մը կատարին: Յետահողմը բարձրացնելու համար, անմիջապէս սնունդները, տակառները դէպի ջրուկ փոխադրեցին, որով Սորկան և Սըր ձօն կարողացան կորած պտուտակը քակել որ մի քանի գամերով միայն բռնուած էր ու նորը հաստատեցին:

— Հիմայ վառէ՛ շնոցը, ըսաւ երկրաչափը մեքենավարին:

— Մեր պտուտակը պիտի կարողանա՞յ յաղթել հասանքին, հարցուց Պարթըն:

— Մի՛ տապնայիր, բարեկամս Աճապարենք, այս յորձանքը դիս կը սարսափեցնէ:

Մորկան՝ շնոցը մարբեց նախորդ անգամներէն որոնք թրջած էին, տակառի մը մէջէն շոր անուխ դրաւ հոն ու կրակ տուտալ քսան վայրկեան յետոյ՝ պտուտակը բարձրացոյն արագութեամբ շարժելու մղում մը ստացաւ:

— Ամէն ինչ պատրաստ է, տէ՛ր, ըսաւ:

— Դուք թիւրը ձեռքերնիդ առէ՛ք, հրամայեց երկրաչափը և շոգեմակոյիլը ժայռէն հեռացուցէք՝ երբոր կը հրամայիմ:

Կաթանս կը թնդար և անհամբեր կ'երեւէր: Պտուտակը ալիքները կը պատուէր որոնք անդիմադրելի կատաղութեամբ կը ջախջախուէին անոր թեւհակներուն մէջ, ծխնելոյձը՝ վեր անկուելով ծուխի ամպեր կը պոսթկար, որոնք՝ զարմանալի բան, յորձանքէն կը կլուէին իրրու թէ հոն ծծող ջրհան գործիք մ'ըլլար:

— Յառա՛ջ, պոռաց Սըր ձօն, զեկին ծօտ որքի կեցած:

Օ՛Քանոր և Պարթըն թիւրը յեցուցին ժայռին դէմ, և պտուտակը զարձաւ փրփուրի աւազին սքսկում նեանելով: Շոգեմակոյիլը ուժեղապէս յետահողմին վրայ մղուած և պտուտակէն դէպ յառաջ քշուած, ուժգին տատանուելով պտուտեց անցաւ յորձանքը: Դանակի պէս սուր ու ժայռի պէս հաստատ քիթը, շախմատեց այդ կեղբոսնաձիգ պտուտակուները, ծռեցաւ, սպառ ուղղուեցաւ ցատկելով ալիքներուն վրայէն:

— Քէ՛, շոգեպինդ, Մորկան, գառաց Սըր ձօն:

Պատերազմը սկսած էր Հոսանքը՝ կարծես թէ վերաւորուած այդ որսը կորսնցնելուն, կատաղութեն կը բազիւէր, ալիքներ կը յարուցանէր, կը մռնէր, սակայն շոգեմակոյիլը՝ սրտատակի ուժգին հարուածներէն յառաջ կը մղուէր սոստանելով, կը բարձրանար ու կ'իջնէր հեծելով, կարծես թէ կը տքար այդ յամառ կռիւին մէջ:

Երկու վայրկեան՝ քաջարին Հուսախորտ, երկրաչափին շոգեպինդ բազուկներէն առաջնորդուած՝ յորձանքի պտուտակուներուն մէջ մաքառեցաւ, դուրս պրծաւ, ու նեախ մը պէս խոյսցաւ հարուէն իջնող գետին մէջէն, որ թամբա գետին պէս լայն էր, մռայլ, ամենաարքնթաց, և կղերուած էր՝ բարձր, սղօրկ, սեղ կտրուած ժայռերէ:

— Հուրրա՛, հուրրա՛, դոռաց Օ՛Քանոր, թին նեանելով:

— Լաւ որ կրցանք փախչիլ, գոչեց Պարթըն, ու բախտ թեւէն խոյսալով, Պըրբը... սարսափէս զեւ կը դողամ՝ միտքս բերելով որ այս պահուս այդ սեւ ձաղարին մէջ պիտի ըլլայի:

— Առանց այդ ժայռին, ոչ ոք մեզմէ ոչ զ պիտի մնար, ըսաւ Սըր ձօն:

— Աւրիչ յորձանքներու պիտի հանդիպին՞ք, հարցուց Պարթըն:

— Ո՛վ կարող է բնի առ Ուղեգծին վրայ կը նայիմ, և ոչ իսկ ասիկայ կը նշանակէ:

— Ես՞ր գետով մը կ'երթանք:

— Չ'անդրադարձա՞ր ուրեմն, միւս գետը հիւսիսէն կ'իջնէր, իսկ ասիկայ հարաւէն կ'իջնէ:

— Դէ՛ ըսան, տէր, ամբողջ անուխնիս պիտի սպասենք, և արդէն հարբիւք բերջէն աւելի չունինք:

— Անկէ ուրիշ կը գտնենք: Այս գետին ջուրը համտեւէ նայինք:

Պարթըն ջրաման մը խոփեց հոսանքին մէջ, լեցուց ու շրթուներուն տարաւ:

— Կրո՞յր տանի, գոչեց, զեւ աղի է:

— Ճակատագրէն հարձուած ենք ըսաւ Օ՛Քանոր:

— Չլքանի՛նք, բարեկամներ, ըսաւ Սըր ձօն, անոյձ ջուր պիտի գտնենք:

— Բայց գետափը, միշտ շատ բարձր և սղօրկ է, տէր:

— Յուսա՛նք, Օ՛Քանոր: Այսօրես սկսեալ փոխն ի փոխ պիտի հսկենք մեքենային:

— Իրաւացի՛ է, աւեցուց Պարթըն, Հնոցականները ու մեքենավարները ուրիշներէն աւելի կը խնեն: Առ մենք չորս լիտրէն աւելի չունինք:

— Հազիւ՝ չորս օրուան համար բաւական է, ըսաւ Սըր ձօն: Այլքերնիդ լաւ բացէ՛ք, ակունջնիդ լաւ սրեցէ՛ք, թերեւս այդ ժայռերուն վրայ ջուր կը վազէ:

Օրը անցաւ առանց պատահարի, Հուսախորտ շարունակեց զեւն ի վեր ելլել շոգեպինդ՝ ետեւէն ձգելով լուսաւոր հեռք մը, այնպէս որ, կարծես թէ այդ գետին ջուրը փոսփորով խառնուած էր Գետափունքը շփոխուեցան երբեք: Միշտ բարձր էին ու լողձուն, անկարելի էր վեր մազլցել:

Երկնային ժամը ու թին ատենները, Օ՛Քանոր փորձեց ելլել ալ ափունքին վրայ, որ թեպէտեւ սեղ էր ու շատ բարձր, խորունք ձեղքեր ու ջրցուածքներ ունէր. քանի մը մեզր բարձրացաւ, բայց ստիպուեցաւ վար իջնել: Չախ ափն ալ փորձեց մազլցիլ. բայց ի գուր:

Սրբ ձօն և ընկերները խորհրդակցեցան և մէնքն ալ նոյն գաղափարն ունեցան, յառաջ երթալ մինչև որ անուխը սպառի, ու գիշերին տաներկու ժամուան հսկումի չորս պահերը ուշադիր գործադրելը

Սրբ ձօն և Օ'Քանտր յանձն առին՝ առաջին և երրորդ պահին հսկումն, Մորկան և Պարթըն երկրորդ ու վերջին պահը:

Գիշերը դանդաղ անցաւ, սակայն գետին երկու ակերը իրենց ահադին բարձրութիւնը, սեղ դասութափը պահեցին Ջրվէժի մը կամ հեղեղի մը մերձաւորութիւնը ցոյց տուող ո՛չ մէկ ազմուկ ոչ մէկ շառաչ՝ ընդհատեց խուլ կարկաշը սեւ գետին ու երազ զարկը պտուտակին:

Յաջորդ օրն ալ առանց նորութեան, երկու ակերն ալ գրեթէ միշտ այդպէս բարձր կը շարունակէին՝ առանց ձեղքուածքի, առանց սղտիկ ծոցի մը, առանց անոյշ եղբւրքի մը: Միայն թէ՛ տեսնուեցաւ որ գետը գերազանց ուժգնութեամբ կը վազէր և թէ կը ծռէր գէղի հարաւ, հարաւ արււմուտը: Լիզը մը ջուր եւս սպառեցաւ. ու շատ անուխ գործածուեցաւ մեքենայի հնոցին մէջ, որ կասկարմիր դառնալով, զարհուրելի կերպով կը տառապեցնէր հնոցալստները:

Երրորդ օրը, Սրբ ձօն՝ սաստիկ անհանգիստ, շատ անգամ կեցնել տուաւ շոգեմակոյլը սպառածներու վերելքը փորձելու համար. բայց ի դուր՝ Ստեպ՝ ինքնիրեն կը հարցնէր թէ՛ «Լաւագոյն չէ՞ր արդեօք ետ դառնալ, բայց սարսափահար դիտեց, տեսաւ որ անուխը անագին սպառած էր: Աւրին երկու մեծ վտանգներ կը սպառնային, ջուրի և անուխի պահասութիւնն Յիրաւի սարսափելու բան:

Չորրորդ օրուան կէսօրը՝ Ղուսափարին մէջ մէկ լիզը միայն ջուր կար: Կէսօրէն վերջ, երկուքին, յետ երկար վարանումներէ, այդ գծրախտները որոնք կը զգային իրենց լեզուին քւ կոկորդին ցամքիլը, այդ ջուրին մէկ մասն ալ խմեցին: Նոյն օրուան ժամը չորսին, վերջին կաթիլը ալ կ'աներձուութանար՝ ձերմակնալու շափ տարցուած հնոցի, ջերմութենէն այրած անոնց կոկորդներուն մէջ:

Վերջին կաթիլն երբ սպառեցաւ՝ խոր լուծիւն մը տիրեց Ղուսափարին վրայ: Սրբ ձօն, այդ յանդուգն երկրաշարիք, որ մահուան կը զիմագրուէր առանց վախի, Պարթըն, Օ'Քանտր և Մորկան, ամէնքն ալ վհատեց ինն կ'ըր պիտի գտնէին ջուրը: արդեօք ի՞նչ պիտի պատահէր վաղը կամ միւս օրը:

Այս հարցումները կը ցցուէին այդ մարդկանց չրթուքներուն վրայ հազիւ խոնարհեցած վերջին կաթիլէն և արդէն ցամքած:

Ոչ մէկ գրիչ կրնայ նկարագրել այդ դժբախտներուն զգացած տանջանքը՝ գիշերուան տասերկու երկար ժամերու պահուն Աւտուան ժամը 8 ին Պարթըն, գրեթէ այլեւս խօսելու կարող չէր:

— Տէ՛ր, կահապեց. կաթիլ մը ջուր, կաթիլ մը միայն:

— Աւույ մըն ալ չունինք, պատասխանեց Սրբ ձօն յուսահատ շեշտով:

— Բայց, ո՞ւր ենք:

— Թէքսասին ներքեւ, թէ որ հաշիւներս չը յարեն:

Պարթըն իրեն նայեցաւ առանց բան մը հասկնալու ու նորէն ինկաւ խուլ հառաչանք մ'արձակելով:

Ուրիշ տասերկու ժամեր ալ անցան. յետոյ ուրիշ տասերկու ժամեր եւս: Աւրին երեսունվեց ժամէ իվեր ուույ մը ջուր չէին խմած: Առնցմտ ոչ ոք կարող էր ոտքի կենալ: Ամէն մի երկու ժամ՝ կատաղաբար բանող մեքենայի բոցին առջեւ կենալով՝ անոնց չրթուքը սեւցած էին ու կը ձեղթուէին. լեզուին ցամքած ու կարծրացած՝ չէր կարող շարժիլ, կոկորդինն ալ չորցած և կարծր կեղեւ մը կապած էր: Այդ բերաններէն ոչ մէկ ձայն կ'ելլէր:

Հինգերորդ օրն՝ կայսութիւնը չէր փոխուած: Շոգեմակոյլը միշտ կը վազէր գետնի վեր, որ միշտ զեռ սպմուած կը մնար այդ յաւիտենական սեպացեալ պարխալներուն միջև: Պարթըն կը տապալակէր շոգեմակոյլին խորը խզողիկ ձայներ արձակելով. Օ'Քանտր, որ լապտերներուն համար քարիւղին շիշը խմելով պարպեր էր, կը փսխէր, Մորկան, հընոցի կրակէն կէս մը այրած, գրեթէ կենդանութեան նշան ցոյց չէր տար: Մի միայն Սրբ ձօն ինքզինքը չէր կորսնցուցած և նաւուս յետասկողմը՝ զեկի փայտին մօտ կծկած կը մնար՝ ճակատը ձախ ձեռքին մէջ սիմելով:

Երկու ուրիշ երկար ժամեր եւս անցան, երկու օրերու շափ երկայնի շոգեմակոյլը, վառելիքի պահասութեամբ՝ կէս մարած կրակով, ժամուան մը մը մէջ հախու երեք չորս մղան կը կորէր ծուռ ու մուռ շրջաններ գծելով ժայռերուն զարնուելով ջախջախուելու վտանգի մէջ: Երկրաշարիք սակայն զեռ կը զիմագրէր, և յուսահատ ճիգեր կը թափէր շոգեմակոյլին խորը չզլորտակելու համար:

Հանեց ժամացոյցը, նայեցաւ. ցերեկուան ժամը տասն էր:

— Լին... ցած է... հոնչեց:

Այնպատեցաւ մեքենային մօտենալ, բայց չանկարձ ուժերը կորեցան, աչքերը մթապնեցան ու ծուռկերուն վրայ ինկաւ: Պահ մը յանդարձ յուսահատ ճիգերով կրցաւ ոտք ելլել: Աչքերը լայնցան, շոգային, ակունջները ուշադիր մնացին, չրթուքները բացուեցան, գոչում մը բրդաւ:

— Ձօ՛ւր... ջուր... ջուր... ջուր:

Հարուստակիլ

Վարկյ-թմբաղի	Արսուստ	Պատասխանատու-Տնօրէն	Տպագրութիւն
ԿԱՐՕ Պ. ՈՒՇԱՎԼԵԱՆ	ԳԱՌԼՕ ԵԱՂԻՆԵԱՆ	ՀՐԱԶԵԱՑ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ	Կ. ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԳԻ